ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> 05 2011թ. N: 325-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՀՈՌՈՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԱՄ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԵՆՐԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 110-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Արամ Մելիքսեթյանի և Հենրիկ Մինասյանի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի դիմումները.

որոշում եմ՝

1. 2011 թվականի սեպտեմբերի 28-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հոռոմի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար Արամ Մելիքսեթյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. 2011 թվականի սեպտեմբերի 28-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հոռոմի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Հենրիկ Մինասյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հովհաննես Մամիկոնյանին՝ սահմանված կարգով կազմակերպել հանձնում-ընդունում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝